ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԳՅՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Գ. ԵՐԻՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Երիցյան.

Ի պատասխան Ձեր 21.11.2019թ. հ.446 գրության՝ տեղեկացվում է, որ Երևան համայնքի 2019թ. հաստատված բյուջեով և Երևան համայնքի 2020թ. բյուջեի նախագծով Երևանյան լճի բարեկարգման և մաքրման հետ կապված ծրագիր նախատեսված չէ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ 2019թ. սեպտեմբերի 28-ին քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության և մի քանի կանաչապատման ընկերությունների կողմից իրականացվել են Երևանյան լճի հարակից աջակողմյան տարածքի մաքրման աշխատանքներ և ավելի քան 2 բեռնատար մեքենա աղբ է դուրս բերվել տարածքից:

Ինչ վերաբերվում է Երևան համայնքի 2020թ. բյուջեում Երևանյան լճի բարեկարգման և մաքրման աշխատանքների նախատեսմանը, տեղեկացվում է, որ նշված տարածքը բնապահպանական տեսակետից շատ կարևոր գործառույթներ ունի Երևան քաղաքի միկրոկլիմայի ձևավորման գործում, սակայն լճի մաքրման գործընթացը համալիր գիտելիքահեն գործողություններ և ռեսուրսներ է պահանջում, որը քաղաքային բյուջեով հնարավոր չէ իրականացնել: Քայլեր են ձեռնարկվում ներգրավվելու Եվրամիության խոշորագույն հետազոտական և նորարարական ծրագրի՝ «Հորիզոն 2020» շրջանակներում հայտարարված «Քաղաքներում ջրի անվտանգության պահպանման և էկոլոգիական որակի բնահեն լուծումներ» ծրագրում, որի շրջանակներում նախատեսվում է Երևանյան լճի բարեկարգման և մաքրման աշխատանքները ներառել նշված ծրագրում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ